

Տեղեկատվություն

մարզային ներդրումային ծրագրերի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ի դրությամբ

2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ վարչապետի մարզային այցելությունների արդյունքներով ՀՀ մարզերում և համայնքներում ձևավորվել է ներդրումային ծրագրերի մշակման և ներկայացման գործընթացը:

Նշված գործընթացի ընթացքում 2017 թվականի ապրիլի 12-ի դրությամբ ՀՀ մարզերի և մասնավոր ներդրողների կողմից ներկայացվել են մոտ 140 ներդրումային ծրագրերի հայտեր՝ տարբեր ոլորտներում ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով: Մասնավորապես՝ թեթև արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, զբոսաշրջության զարգացման, հանքարդյունաբերության, վերականգնվող էներգիայի արտադրության, անասնապահության, մետաղագործության, մեքենատրակտորային կայանների ստեղծման ոլորտներին առնչվող ծրագրային հայտեր:

Նշված ծրագրերը հավաքագրվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում, հստակեցվել և կազմվել են այդ ծրագրերի անձնագրերը, որոնք ներկայացվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների ու գյուղատնտեսության նախարարությունների, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի քննարկմանը: Քննարկման արդյունքներով ստանալով և ամփոփելով նշված գերատեսչությունների կողմից ներկայացված ծրագրերի վերաբերյալ կարծիքներն ու դիրքորոշումները, այն սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Սույն թվականի ապրիլի 12-ի դրությամբ ՀՀ վարչապետի մոտ քննարկվել են ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի, Լոռու և Կոտայքի մարզերի թվով 81 ներդրումային ծրագրեր: Նշված ծրագրերից հավանության են արժանացել մոտ 50-ը: Շուրջ 20 ծրագրեր վերադարձվել են ներդրողներին՝ իրենց ծրագրերը հստակեցնելու, լրամշակելու և կրկին ներկայացնելու նպատակով: Ներկայումս ընթանում են հավանության արժանացած ծրագրերի հստակեցման, աջակցության տրամադրման նպատակով վարկային փաստաթղթերի և գրավադրվող գույքի ուսումնասիրության աշխատանքները տարբեր գերատեսչությունների կողմից:

Առավել իրատեսկան և պատրաստի թվով 11 ծրագրեր ս.թ փետրվարի 21-ին քննարկվել են ՀՀ վարչապետի մոտ ներդրողների մասնակցությամբ: Քննարկումների արդյունքներով տրված հանձնարարականների համաձայն արդեն իսկ 2 ծրագրեր ֆինանսավորվել են, իսկ մյուս 9 ծրագրերի մասով ընթանում են ֆինանսական գործիքների և մեխանիզմների աջակցության գործընթացները:

Դրա հետ մեկտեղ, դեռ շարունակվում են ՀՀ մարզպետարանների, այլ գերատեսչությունների և ներդրողների կողմից ներկայացվել ներդրումային ծրագրեր, և ներկայումս ընթանում են այդ ծրագրերի ուսումնասիրության աշխատանքները: